

նում է ինքնուրոյն և թարգմանական ընտիր երկերով, գանգատում է, որչափ պէտք է մեզ գանգատել մեր ազգի արդի կացութեան մէջ, որ համարուելով կրօնական ազգ՝ տարի է անցնում և չենք ունենում ինքնուրոյն կամ թարգմանական մի գիրք բարեխղճութեամբ և հասուն խորհրդածութեամբ կազմած, որ բաւականութիւն տար ըստ մասին մեր՝ կրօնի գիտութեանը ծարաւի մտքերին, եւ չեմ խօսում դասագրքերի մասին:

Ատարեալ սով է Հայ գրականութեան մէջ եկեղեցական պատմութեան ուսումնասիրութեան, Ս. Գրքի գիտութեան և կրօնագիտութեան վերաբերեալ գրքերի: Մնում է մեզ այդ մասին մեր պասքը լցնել օտար գրականութիւնից, որին շատ շատերս բաւական չենք, լեզու չիմանալով:

Փարրարի նշանաւոր վաստակների մասին մի ճաշակ կամենալով տալ Հայ ընթերցողներին՝ 1889 թուի դեկտեմբերից սկսեալ պարբերաբար ռուս «Странникъ» կրօնական ամսաթերթում տպուող «Եկեղեցու Տիեզերական Հարք» վերնագրով գործը թարգմանեցինք:

Փարրարի երկերը թարգմանելու համար հարկաւոր էր մեծ պատրաստութիւն, և արժէր անգլիերէն գիտենալ, բնագրից թարգմանելու համար՝ իսկ մենք ձեռնամուխ եղանք ոչ թէ մեր ոյժերի վերայ վստահելով, այլ բուն ցանկութիւնից առաջնորդուելով, ուստի և ներումն ենք խնդրում ընթերցողներից նկատելի պակասութեանց համար, որովհետեւ եղածը մի ճաշակ է և առաջին փորձ: Արդէն ռուս թարգմանութեան մէջ հեղինակի ազդու ոճը բաւական պէտք է թուլացած համարենք, իսկ հայերէնում՝ աւելի ևս, որովհետեւ շատ դժուար է մի լեզուի ոճի ներթութիւնը մի ուրիշ լեզուով թարգմանութեան մէջ անաղարտ պահել:

Յ. վարդապետ Մովսիսեան

Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱԶԻԱՆՋԱՅԻ

(ՔԱՐՐԱՐԻ ՆՈՐԱԳՈՅՆ ՀԱՐԱԴՐՈՒԹԻՒՆԻՅ).

(Ռուսերէնից)

«Այնքան ընդհանուր և խոր խորհիւն. ո՛վ Գրիգոր, համարէ՛մ դուք բերան բերեալ:»

Բարսեղ:

I. ԿՐԹՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՆԿՈՒԹԻՒՆ ԳՐԻԳՈՐԻ

Նազիանդ քաղաքը իւր հռչակով պարտական է եկեղեցու այն մեծ և ճարտարաբան հօր հետը ունեցած կապին՝ որին իւր անունը

տուել է: և որը բոլոր քրիստոնեաներից մի Հատիկն է: որ Ա. Սով-
Հաննէս առաքեալից յետոյ կրում է «Աստուածաբան» յարդական
տիտղոսը: Նազիանդը Աստղադովկիայի Հարաւարեման մասնում
մի փոքրիկ քաղաք էր: այժմ էլ քարերի բեկորներով լի մի աւերակ
և անպողարներ վայր է ներկայացնում: ինքն Գրիգորն էլ այդ քա-
ղաքը «քաղաքների մէջ փոքրիկն» է կոչում: և դեռ՝ ոչ բոլորովին
քաղաք: այլ ցամաք և տաղտկալի մի վայր՝ սակաւաթիւ բնակիչնե-
րով: մի այլ տեղ էլ նա այդ քաղաքի մասին՝ որպէս Դիոկեսարիացի-
ների մի փոքրիկ գաղթականութեան մասին, է խօսում: Կնչպէս
երևում է Դիոկեսարիա՝ այն անունն է: որով նա Հռովմայեցիներին
յայտնի էր:

Մինչև 92 թիւը նախ քան Փրիստոս, Աստղադովկիան իւր սեպՀա-
կան թագաւորներով էր կառավարւում: այդ թուին վերջացաւ
նոցա արքայական ցեղը:

Հռովմայեցիք նոցա կատարեալ ազատութիւն տուին: բայց նոքա
նախադասեցին թագաւորի իշխանութեան տակ լինել: Թագաւոր
լնարեցին Արիորարզան Ա: ին: և շարունակեցին միապետական վար-
չութեան տակ մնալ մինչև որ Սիսուսի ծննդից 17 տարի յետոյ Տի-
բերիոս կայսրը Աստղադովկիան Հռովմէական կայսերութեան մի դա-
ւառ դարձրեց 1):

Աստղադովկեցիք իրանց երկրով պարճենալու շատ Հիմք էլ չունէին:
Այդ երկիրը իւր ստրուկներովն էր գլխաւորապէս յայտնի և: երեք
ամենավատ «կեն» երկից մէկն էր: որոնց տակ ենթադրւում էին Արե-
տէ: Աստղադովկիա և Աարիա:

1) Հայոց Արտաշէս Ա. Միհրդատի աջակցութեամբ տիրեց Փոքր Ա-
սիային ի հարկէ և Աստղադովկիային: այսպէս վերջացաւ Աստղադովկիայի
թագաւորութիւնը: Նա 89 թուին Ն. Ք. Փրիստոս, իւր զօրքերի դաւա-
ճանութեամբ զոհ գնաց արտասուքը աչքին գոչելով: «աւաղ փառացս ան-
ցաւորի»: Արտաշէսի յաջորդ Յիզրան Բ. և Միհրդատ չկարողացան դի-
մանալ Հռովմայեցւոց զօրութեանը և Յիզրան ստիպուեց մանաւանդ Մի-
հրդատի մահից յետոյ Աստղադովկիան գիջանել Հռովմայեցիներին և թա-
գաւորեց այնտեղ Արիորարզան՝ Հռովմայեցւոց կուսակիցը: Հայ-թարգ:

Յունական մի ծագկալագի մէջ կայ մի երգիծական մակագրութիւն: որի մէջ ասուած է թէ: չղեռունը մի անգամ խածեց Սապաղովկեցուն և: — չղեռունը մեռաւ:

Հինգերորդ դարի սկզբում ապրող Խաղոր Պելուսիոզը Սապաղովկեցիների մասին խօսում է որպէս ստախոս: վաս: խաղաղութիւն չսիրող: այլ խռովութիւն տածող: խարդախ: անամթ: Հակառակապէս: երկչոտ: ծիծաղիչ: ցած: դաւաճան: կոպիտ: զգուշի: զիւրաթեք դէպ ի ստութիւն և Հստատուքացութիւն՝ ժողովրդի մասին: Ամանայի Հարուստ քուրմերի բռնութիւնները ժողովրդի մեծ մասին Հասցրին ստրկի և Հասարակ երկրագործի ստոր աստիճանին: որը սակայն չէր ընկճել նոցա մէջ Հակումն դէպ ի ազաւթութիւնն ու ցոփութիւնը: Նոյն ինքն Պրիզորի ակնարկութիւնները իւր Հայրենակիցների մասին շողորթութիւն չէին: և նա Հիմք ունէր նոցա մասին զանգաստիլ որպէս խառնակիչների և թեթեամբների մասին: Կարծես մի քանի ժողովրդի յատուկ է միեւնոյն ժամանակ մարդկութեանը թէ ամենավատ և թէ ամենաբարեւորները արտադրել: Պրիզորը սիրում էր իւր երկիրը: նա Հպարտանում էր իւր Հայրենիքի աւելաբարանոց ձիերովը: նորա ազնուարարոյ երիտասարդներովը: նորա անդրդուելի ուղղափառութեամբը: Նա արտադրել է Աստուրիայի Հռետոր Պաղանխասին և Տիանայի Ապողղունիսին: սովեստին և Հրաշագործին: և ընդ նմին՝ չորրորդ դարի եկեղեցու երեք մեծ Հայրերին: որք են Պրիզոր Նազիանզացի: Մեծն-Բարսեղ և Պրիզոր Նիսացի: որոնք յայտնի էին իրանց ազգեցութեամբ: ճարտարաբանութեամբ և աստուածաբանական խորհրդածութեան ներհունութեամբ: և ընդՀանրապէս յայտնի էին որպէս չերեք մեծ կապաղովկեցիներ:

Եթէ Սապաղովկիայում լինէին շատ այնպիսի անեղ: որպիսի էին Պրիզոր Աստուածաբանի և Մեծն-Բարսեղի աները: եթէ այնտեղ լինէին շատ ընտանիք որոնք կարողանային Հպարտանալ այնպիսի մայրերով՝ որպիսի էին Նմիլիան և Նոննան: այնպիսի դուստրներով՝ որպիսիք էին Մադրինան և Պորդոնիան: այնպիսի եղբայրներով: որպիսի էին Բարսեղ Մեծն և Պրիզոր Նիսացին: Աստարիտ և Պրիզոր Նազիանզացիները: ի Հարկէ դա կը լինէր մի երկիր՝ որ կա-

րող կը լինէր լիապէս հայրենասիրութիւն զարթուցանել:

Գրիգորի հայրն էլ էր Գրիգոր կոչուում: Նա իւր ծագմամբ մի յարգելի մարդ էր, նշանաւոր հարուստ, և ունէր մօտակայ Արիանդ գիւղում կալուած: Նա քրիստոնեայ ընտանիքի զաւակ էր, բայց պատկանում էր մի մութն, սակայն հետքերական աղանդի, որ լուսաւոր աստուածապաշտներ (լուսակրօններ) էր կոչուում և յայտնի էր ի պսիստարեան (իւպսիստոս — ամենաբարձրեալ) յորջորջմամբ, որի մասին մենք միայն երկոքին Գրիգորների գործերի մէջ բաց ի մի տեղից՝ էլ ոչինչ չգիտենք: Նոքա թէև Աստուծուն երկրպագում էին, որպէս «ամենաբարձրելոյ» և այնպէս էլ իրանց յորջորջումն ստացել էին, սակայն իրանց քրիստոնէական հայեացքների հետ շփութում էին պարսկական և հրէական տարրեր էլ: Հերքելով կոքերը և չընդունելով զոհերը, նոքա Աստուծուն երկրպագում էին ի դէմս լուսոյ և կրակի: Փոխանակ առաջին օրուան՝ (կիւրակէ) սուրբ էին պահում եօթներորդ օրը (շաբաթ) և անմաքուր կերակուրների համար հրէական օրէնքներով էին վարւում: Ինչ վերաբերում է կեանքի սրբութեան՝ անդրանիկ Գրիգորը (հայրը) անբասիր էր, իսկ նորա կին Նոննան՝ լինելով իսիստ նախանձայոյզ քրիստոնեայ, բնական է որ վիրաւորւում էր տեսնելով իւր ամուսնուն հերետիկոսական սովորութիւնների անձնատուր եղած, և Նոննան իւր ազդեցութիւնը գործ էր դնում, որ իւր ամուսնուն կարողանայ դարձնել դէպ ի ճշմարտութեան ճանապարհը: Նոննան այս դէպքում յաջողութիւն ունեցաւ և նորա ջանադրութիւնները արդիւնաւորութեան Գրիգորի (հօր) երազովը: Նա երազում տեսաւ որ, ինքն երգում է Ճիւղ-ը սաղմոսի առաջին տունը — «Աւրախ եղէ ես՝ ոյք ասէին ցիս ի տուն Տեառն երթիցուք մեք»: Ուստի և նա Նոննային զիջումն արեց, որ նորա հետ քրիստոնէական եկեղեցին գնայ և շուտով էլ այդ եկեղեցու վարդապետութիւնն ընդունեց: Այդ ժամանակներին (325 թ.) Կեսարիայի Ղևոսդ և ուլիշ եպիսկոպոսներ Նիկիայի տիեզերական ժողովին մասնակցելու համար անցան Նագիանգի միջովը, և Գրիգորը (դէպքից օգտուելով) մկրտուեց: Բաղդաւոր նախազգացութիւնը այնտեղ նկատելի եղաւ՝ երբ ուրիշները կանգնած ընդունեցին մկրտութիւնը, իսկ նա ծնկաչոք: Հանդիսականներից ոմանք

պատմում էին որ երբ նա (Պրիգոր Հայրը) ջրից դուրս եկաւ, գլուխը պսակաւորուած էր լուսով, իսկ Նազիանգի եպիսկոպոսը Համարձակուեց մի յանդուգն գուշակութիւն անել թէ Պրիգորը իւր յաջորդն է դառնալու:

Մի քանի ժամանակից յետոյ աւագ Պրիգորը (Հայրը) ձեռնադրուեց քահանայ և շուտով էլ, յատկապէս 329 թուին մօտ, իւր Հայրենի քաղաքի եպիսկոպոսը դարձաւ: Այդ ժամանակ նա յիսուն տարեկան էր: Նա աստուածաբանութեան շատ ծանօթ չէր, թէև ամեն բանով աշխատում էր իւր գիտութեան պակասը լցնել որքա՛հնար էր: Նորա նախորդը ինչպէս երևում է, փոքր ինչ թոյլ էր, այս պատճառով էլ թեմը բարեկարգութեան մէջ չէր. իսկ Պրիգորի վարչութիւնը թէև Հաստատամիտ բայց կարճատև էր: Նա եռանդոտ Հակառակորդ էր արիոսականութեան և այլ Հերետիկոսութիւնների, և եռանդուն Հոգածութեամբ Հսկում էր իւր Հօտի բարեկեցութեան վերայ: Նազիանգի եկեղեցին դարձաւ «Հեղեղի ժամանակի հաւի նման»: Նորա որդին (Պրիգոր Աստուածաբանը) սիրով յիշում է նորա խաղաղ արտաքինը, որը ծածկում էր Հօր կրակոտ սիրտը, յիշում է նորա Հոգւոյ բարձրութիւնը, նորա Համբերութիւնը և ուղղամտութիւնը, նորա անբասիր բարեգործութիւնը և ազնուամտութիւնը, որը գերծ էր փարիսեցիութեան ամենափոքր Հետքից էլ: Իւր քաղաքի բնակիչներից և իւր Հօրից յարգուած, նա շարունակեց քառասուն և Հինգ տարուայ ընթացքում էլ կատարել քահանայի և եպիսկոպոսի պարտաւորութիւնները և Հասաւ խորին ծերութեան Համարեա Հարիւրամեայ Հասակը: Նազիանգ քաղաքին արած իւր այլ ծառայութիւնների Հետ՝ նա շինեց այնտեղ, գլխաւորապէս իւր Հաշուով, և մի եկեղեցի:

Նորա կին Նոննան ազգեցութեամբ և իւր գեղեցիկ բնաւորութեամբ աւելի ևս նշանաւոր էր, և յատկապէս նորան է պատկանում նոցա մեծանուն որդու կրթութիւնը և Հոգեկան դաստիարակութեան ամենամեծ բաժինը: Նոննան իւր քրիստոնեայ ծնողներից լուրջ Հսկողութեամբ էր դաստիարակուած և նուիրուած լինելով իւր տնային պարտաւորութիւնները, անթերի կատարելուն, պատկերացնում էր Սողոմոնի իմաստուն կանանցը: Պատշաճաւոր կերպով

իւր ամուսնուն Հնազանդ լինելով Հանդերձ, նա միանգամայն նորա առաջնորդն ու դաստիարակն դարձաւ. նա կրօնական զգացումներին խիստ անձնատուր լինելով Հանդերձ՝ երբէք իւր տնային պարտաւորութիւնները զանցառու թեան չէր տալիս: Երբ նա զբաղուած էր լինում կրօնական պարտաւորութիւնները կատարելով՝ ոչ ոք չէր կարող մտածել՝ թէ նա մի երկրային Հոգս ունի, իսկ երբ զբաղուած էր լինում տնային տնտեսութեամբ, ոչ ոք չէր կարող մտածել նորա խորին բարեպաշտութեան մասին: Նա ամեն պարագայում իսկական կին էր, և այն, ինչ որ գործում էր՝ ի սրտէ էր գործում: Կենսական փորձը վարժեցրել էր նորան անպայման հաւատ ընծայելու սրտագին աղօթքի ազդեցութեան և բոլոր փորձութիւնների ժամանակ՝ նորա մէջ էր ապաւէն որոնում: Նորա բոլոր խորհրդածութիւնների մէջ Աստուած առաջին տեղն էր բռնում: Նա վերացական կեանքի ոյժը լծորդում էր գործնական կեանքի վարժութիւնների հետ, և նորա սէրը դէպ ի ողորմածութիւն այնքան էր, որ յաճախ կրկնում էր թէ, եթէ պէտք լինէր, նա յօժարութեամբ կը վաճառէր եւ իրան եւ իւր որդւոցը ի ստրկութիւն, որպէս զի ձեռք բերէր դրամ աղքատների համար: Բոլոր այս հաւաստիքը դուրս են բերուած նորա որդու տասնևութերորդ քարոզում արած նկարագրութիւններից: Այն մանրամասնութիւններից, որ նա յաճախ յաւելացնում է, մենք կայրող ենք տեսնել, որ Նոննայի գեղեցիկ նախանձայուկութիւնն ու ազնուաբարոյութիւնը երբեմն փոքր ինչ աղօտանում են ձեականութեամբ և աններողամտութեամբ: Ի միջի այլ հետաքրքրելի մանրամասնութեանց, Գրիգորը հարկաւոր է համարում ի միջի այլոց յիշեցնել և այն մասին, որ Նոննան երբէք իրան թոյլ չէր տալիս եկեղեցում թքել: Նա երբէք սեղանից երեսը յետ չէր դարձնում, երբէք հեթանոս կանանց հետ չէր համբուրում և նոցա ձեռքը չէր սեղմում. անհնարին էր բռնի ստիպել նորան աղ գործածել նոցա հետ, որոնք հեթանոսների խնջոյքում եղել էին: Նա երբէք չէր կամենում թատրօնում լինել, և երբէք չէր կամենում մինչև անգամ հեթանոսական տաճարներին մտիկ անել: Գրիգորը (որդին) իւր բոլոր կեանքում տածում էր նորա յիշատակը խորին սիրով: Ինչ որ էր Անթուսան Յովհան օսկերերանի

Համար և Մոնիքան երանելւոյն Աւգուստինոսի Համար, նոյնն էր Նոննան մեծ Կապադովկիացու Համար, և այսպէս բաղդաւոր լինելով իւր ծնողներովը, նա սիրում էր նոցա նմանեցնել Աբրահամին ու Սարրային:

Գրիգոր (որդին) Նազիանզացին ծնել էր մօտ 330 թուին իւր հօր մկրտութիւնից հինգ տարի յետոյ: Նոննան ցանկանում էր զաւակ ունենալ, և խոստացաւ որ, եթէ նորան որդի լինի, ընծայէ Աստուծուն. այլ խօսքով, նա կը կըթէ նորան այնպէս, որ նա երէց դառնար: Երբ որ նորա աղօթքը լսելի եղաւ, եկեղեցում իւր ձեռքերի վերայ ունենալով մանկանը, սրբագործեց նորա փոքրիկ ձեռքերը զնելով սուրբ գրքի վերայ: Գրիգորը նրան նմանեցնում է Աննային, որը Սամուէլին Սելովմում Աստծուն նուիրեց: Նա հոգածութեամբ սովորեց կրօնն և մանկութիւնից արդէն ծանօթ էր Աստուածաշնչին: Ի բնէ խորամիտ և ջանասէր լինելով՝ նա յօժարութեամբ ենթարկւում էր այն ազդեցութեանց, որ գործ էին զնում նորա վերայ և իրան նուիրեց կուսական կեանքին: Նա իւր այս ցանկութեան մէջ ամրապնդուեց մի գեղեցիկ երազով: Երազի մէջ նորա մօտ եկան երկու գեղեցիկ աղջիկներ, միահասակ և մի գեղեցկութեամբ, երկար, սպիտակ հանդերձ հագած և սքողուած ծածկոյթով, որոնք ստուերարկում էին բայց չէին թաքցնում նոցա աչքերի փայլը և նոցա դէմքերի համեստութեան շառագունութիւնը. նոքա մօտեցան քնած մանկանը բարեհամբոյր և հաճոյական հայեացքով, և երբ որ մանուկը հարցրեց աղջիկներին անունը, նոքա պատասխանեցին որ իրանք սրբութիւնն ու ողջախոհութիւնն են — Յիսուսի ուղեկիցներն ու այն բոլորի ընկերներն, ով որ հրաժարւում է երկրային կապերից իրան բոլորովին բարեպաշտական կեանքի նուիրելու համար: Այդ կոյսերը հրամայեցին նորան իւր հօգին իրանց հետ միաւորել, և իսկոյն վերացան երկինք: Թէև Գրիգորը երբէք չը շեղուեց ամուրի մնալու այս որոշումից, բայց նա միշտ հեռի էր սուրբ ամուսնութիւնը անգոսնելուց, որ այնպէս յաճախ նկատուում է երանելւոյն Հերոնիմոսի մէջ ¹⁾:

1) Մուրատորի կարծիքը թէ Գրիգոր ամուսնացած էր, անհեթեթ է. ամուսնացածը էր Գրիգոր Նիւսացին:

Տարիքի հետ Գրիգորի մէջ աճեց սէրը դէպ ի ճարտարախօսութիւնը, որը համարվում էր ամենալաւ և զօրեղ միջոցը ճշմարտութիւնը պաշտպանելու: Նա իհարկ է դեռ կանուխ հասակից տաղտկացած էր Նազիանզի պէս փոքրիկ քաղաքի խեղճուկ կրթութեան աղբիւրներից, և նորա հայրը բարեբաղդաբար բաւական կարողութիւն ունէր որ, նորան Կապադովկիայի գլխաւոր քաղաքը՝ Կեսարիա ուղարկէր:

(Շարունակելի)

Յ. Վ. Մ.

ԱԶԳԱՅԻՆ

Վեհափառ Հայրապետի Դիւանատան կառավարիչ Սահակ Վարդապետ Բաղդասարեանց արձակեցաւ ի պաշտօնէ Դիւանադպրութեան և ի տեղի նորին կարգեցաւ Սահակ Աբեղայն Ամատունի:

Նորին Օծութիւն Վեհափառ Հայրապետն ամենայն Հայոց Գերապատիւ Եսայի եպիսկոպոս Աստուածատրեանցին Պարսկաստանի և Հնդկաստանի Հայոց առաջնորդ նշանակելով, առանձին գրութեամբ առ Արեգակնափայլ Հաճն Պարսից և առ Սաղբաղամն, յանձնարարած էր զՆորին գերապատուութիւնը բարեհաճ խնամոց Նորին Մեծութեան:

Ի պատասխանի գրութեանց իւրոց Նորին Օծութիւնը ստացաւ հետեւեալ պատասխանիքը Նորին Մեծութիւնից Հաճնշահից և նորա Սատրաղամից:

Թարգմանութիւն Հրովարտակի Արեգակնափայլ Շահին Պարսից առ Սրբազնագոյն Կաթողիկոսն ամենայն Հայոց Տ. Տ. Մակար:

Կնիք Նորին Մեծութեան
Նասր Էդդին Հաճն

Նորին Սրբութեան Մեծի Պատրիարքին ամենայն Հայոց (որ) ի վերայ երկրագնդի, — Եղեցի ի վե-